Արմավիրի
զարգացման կենտրոն
սոցիալ-տնտեսական հասարակական
կազմակերպություն

Armavir
Development Center
socio - economic public
organization

0901 ՀՀ ք. Արմավիր Շահումյան 68ա
Հեռ. (+374 –237) 23034, (+374 -94) 502039
էլ. հասցե info@armavirdc.org

0901 RA, Armavir, Shahumyan 68ª
Tel (+374 –237) 23034, (+374 -94) 502039
E-mail info@armavirdc.org

Թիվ 87/01
31.05.2021թ.

ՀՀ Արմավիրի մարզպետ
Համբարձում Մաթևոսյանին

Տեղեկություն ստանալու հարցում

«Արմավիրի զարգացման կենտրոն» հասարակական կազմակերպությունը ՄԱԿ-ի զարգացման ծրագրի (UNDP) շրջանակներում՝ Եվրոպական Միության ֆինանսավորմամբ, իրականացնում է «Ապագան այսօր. կանանց, երիտասարդների և երեխաների հզորացում՝ Հայաստանում ժողովրդավարությունը խորացնելու համար» ծրագիրը, որը սկսվել է 2021թ.-ի հունվարի 1-ից՝ 12 ամիս տևողությամբ: Ծրագրի նպատակն է հզորացնել համայնքները, որպեսզի գործեն բարեվարքությամբ և պահանջեն բարեվարքություն՝ ակտիվորեն մասնակցելով ու հզորացնելով համագործակցային ջանքերը՝ մարտահրավերներին դիմակայելու: Ծրագրի շրջանակներում ստեղծվելու է առցանց գործիք, որի օգնությամբ մշտադիտարկում է իրականացվելու՝ ուսումնասիրելու համար 2020թ-ին COVID 19-ի մարտահրավերներին դիմակայելու պետության ջանքերը, ծրագրերը:

Խնդրում ենք հաշվի առնել այն փաստը, որ լիարժեք հետազոտություն իրականացնելու համար, որի արդյունքները ներկայացնելու ենք նաև Ձեզ, անհրաժեշտ են աջակցություն ստացած տնտեսվարող սուբյեկտների գործունեության ցուցանիշների դինամիկա, ինչի համար խնդրում ենք տրամադրել նաև յուրաքանչյուր աջակցության ծրագրից օգտված շահառուների կոնտակտային տվյալներ: Հետազոտության արդյունքները մեր կողմից ներկայացվելու են ընդհանրացված կերպով՝ առանց նշելու որևէ նույնականացնող տեղեկատվություն:

Համաձայն ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածների և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝ խնդրում եմ տրամադրել հետևյալ տեղեկությունները՝

1. Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման առաջին ծրագրի հետ կապված՝
   - ամբողջ հանրապետությունում դիմում ներկայացրած տնտեսվարող սուբյեկտների քանակը,
   - աջակցություն ստացած տնտեսվարող սուբյեկտների քանակը,

- Արմավիրի մարզում գրանցված/գործունեություն իրականացնող, աջակցության համար դիմում ներկայացրած տնտեսվարող սուբյեկտների ցանկը՝ ներառյալ գործունեության ոլորտը, աջակցության չափը և նպատակայնությունը,
- Արմավիրի մարզում գրանցված/գործունեություն իրականացնող, աջակցություն ստացած տնտեսվարող սուբյեկտների ցանկը՝ ներառյալ գործունեության ոլորտը, աջակցության նպատակայնությունը:

2. Կորոնավիրուսի հաղթահարմանն ուղղված պետական աջակցության երկրորդ ծրագրի հետ կապված՝

- աջակցություն ստանալու համար Արմավիրի մարզից դիմում ներկայացրած, սակայն մերժում ստացած տնտեսվարող սուբյեկտների ցանկը, մերժման պատճառները՝ ըստ մերժում ստացածների մեջ ունեցած տեսակարար կշիռների,
- ծրագրի շրջանակում Արմավիրի մարզից աջակցության համար դիմում ներկայացրած տնտեսվարող սուբյեկտների ցանկը,
- Արմավիրի մարզում գրանցված/գործունեություն իրականացնող և աջակցություն ստացած տնտեսվարող սուբյեկտների ցանկը, յուրաքանչյուրի գործունեության ոլորտը, ստացած աջակցության չափը և նպատակայնությունը:

3. Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման երրորդ ծրագրի հետ կապված՝

- Արմավիրի մարզից աջակցության համար դիմում ներկայացրած տնտեսվարող սուբյեկտների ցանկը,
- Արմավիրի մարզում գրանցված/գործունեություն իրականացնող և աջակցություն ստացած տնտեսվարող սուբյեկտների ցանկը, գործունեության ոլորտը, աջակցության օգտագործման հիմնական ուղղությունները,
- Արմավիրի մարզից դիմում ներկայացրած, սակայն մերժում ստացած տնտեսվարող սուբյեկտների մերժման պատճառները՝ ըստ մերժում ստացածների մեջ ունեցած տեսակարար կշիռների:

4. Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման հինգերորդ, տասներորդ, տասնութերորդ, տասնիներորդ և քսաներորդ ծրագրերի հետ կապված՝

- Արմավիրի մարզում յուրաքանչյուր ծրագրի շրջանակում աջակցություն ստացած բիզնեսների ցանկն ըստ ուղղությունների, յուրաքանչյուր բիզնեսի ստացած աջակցության չափը, ունեցած աշխատակիցների քանակը 2020 թ-ի հունվար, հուլիս և դեկտեմբեր ամիսների դրությամբ,
- ծրագրերի շրջանակում աջակցություն ստանալու համար ներկայացված դիմող սուբյեկտների ցանկը:

Խնդրում եմ տեղեկություն ստանալու հարցմանը պատասխանել օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:

Խնդրում ենք ծանուցումն ուղարկել էլեկտրոնային (կամ թղթային) տարբերակով:

Պատրաստ ենք վճարել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված սահմանաչափը գերազանցող տեղեկության տրամադրման համար:

Կանխավ շնորհակալությամբ,

ՀԿ նախագահ՝ Ն. Առաքելյան